

մաքուր ձեռացըն տարածմամբ :

Նոյն ըզբաժակ մահու արքիալ ,

ի դաւողէն դաւաճանեալ :

Նըման լուսո փայլման սլացեալ ,

ի եւ իրկնայնոց համադգսեալ : } }

Նա այժմ ընդ մեզ բարեխաւսէ ,

ըզթողութիւն մեղաց հայցէ :

Մըտեալ ներքո վարագուրին ,

յետ առաջնո ի յերկրորդին :

Ի սրբութիւն սրբոցն յառեալ ,

յորում Յիսուս յաջմէ բազմեալ :

Նըմին երգէ ընդ սրբէից ,

զերեքսրբանն յաւիտենից :



ՏԱՂ. ՍՈՒՐԲ. ԽԱԶԻ

Նոր դրախտին եկեղեցւո , ծառ կենաց տընկեալ ի մէջ ,
ոչ⁽¹⁾ քրովբէիք պահեալ , այլ գիւրահուպ ի մէնջ :

Երկակի ներհակաց տիպ , մահաբերին տընկոյ ձեւովդ ,

եւ կենարարաւն ի քեզ⁽²⁾ , ծառոյն կենաց նըման :

Բոպէից բանաւորաց , բանալի եղեր դրախտին մտից⁽³⁾ ,

վերըստին ի նոյն , անփոփոխելի կայիւք :

Սեռն անապակ սիրոյ էին , ծածկելոյն առ Հաւր յայտնիլ ,

զորդին խը տալ վասն իմ , ի մահ մարմնով ի քեզ :

Իմանայի տապան Նոյեան , զաւժանդակեալս ի քեզ պահեա ,

ի հեղձական⁽⁴⁾ մեղաց ծովէ , եւ ի հրեղէն գետոցն :

Սաքեկա ծառոյն նըման , ոչ խոյ չորջակէզ կախեալ ,

այլ գառն Աստուծոյ զննեալ , մեզ հաշտութեան նուէր :

Ի Գողգոթայ կանգնեալ սանուխք , տեսեալմր Յակովբա ցուցեալ ,

հրեշտակաց իջման յերկիր , եւ մարդկան ելից յերկինս⁽⁵⁾ :

Էրեւեալ մովսէսեան բցուպ , բզծով մեղաց հերձանելով ,

եւ իսրայելի նորո , առաջնորդես ի լոյս⁽⁶⁾ :

Հրաւ. Ն . Վ . ԽՈՎԱԿԱՆ

(1) Տպ. գոր ոչ : (2) Տպ. ի բէն պրքուղ կենաց մարդկան : (3) Տպ. մօից վերստին : (4) Տպ. ի հեղձ-
մանէ : (5) Տպագիրը կը վերջանայ հաս : (6) Չեւ . Խ . 231 :

